

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ս Շ Լ ՈՒ Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ  
ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՔԻՆԵՏ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿՈՒՄԲԱՅԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ  
ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱԺՄԱՏԱՆՔՆԵՐՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՄ  
ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ  
ՏՆԵՐՈՒՄ

№ 4

Լ ՈՒ Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1939

374  
0-20

0 120 - 101

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ս Շ Լ Ո Ւ Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

Ա Կ Ո Ւ Մ Բ Ա Յ Ի Ն Մ Ե Թ Ո Գ Ա Կ Ա Ն Կ Ա Բ Ի Ն Ն Տ

374  
0-20  
47

**Ո Գ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Գ Յ Ո Ւ Ղ Ա Կ Ո Ւ Մ Բ Վ Ա Բ Ի Ն**

**Ի Ն Չ Պ Ե Ս Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Լ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր Ն Ա Կ Ո Ւ Մ Բ Ն Ե Ր Ո Ւ Մ  
Յ Ե Վ Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ժ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Ր Ա Յ Ի  
Տ Ն Ե Ր Ո Ւ Մ**

№ 4

Լ Ո Ւ Ս Շ Ր Ա Տ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1939

2 SEP 2013

52.400



Տեխ. խմբագիր՝ Չ. Մարուխյան  
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան  
Գրավ. լիազոր՝ Տ-1707 Գաավեր № 294 Տիրամ 1500

Պետական լատերանի հրատարակչության տպարան, Ցեքեան

3005  
39

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ի՞նչ է տեղեկատու աշխատանքը, ինչո՞ւմն է կայանում նրա ելությունը և ի՞նչպես պետք է կազմակերպել այդ աշխատանքը շրջանային կուլտուրայի տներում, գյուղական և կոլխոզային ակումբներում: Ահա այն հարցերը, վորոնց պարզաբանումն ուզում ենք տալ այս մեթոդական գրքուկով:

Տեղեկատու աշխատանքը հանդիսանում է շրջանային կուլտուրայի տների, գյուղական և կոլխոզային ակումբների քաղլուսմասսայական աշխատանքների հիմնական ձևերից մեկը: Նա քաղաքական ազիտացիա և կոմունիզմի պրոպագանդա տանելու լավագույն միջոցներից մեկն է, վորը ծառայում է քաղաքական լուսավորության խնդիրների կատարմանը և կոնկրետ ոգնություն է ցույց տալիս գյուղի աշխատավոր մասսաներին՝ նրանց կուլտուրական և տնտեսական ընդհանուր աշխատանքներում: Ուստի անհրաժեշտ է, վոր բոլոր շրջանային կուլտուրայի տներում, գյուղական և կոլխոզային ակումբներում անպայման կազմակերպվեն տեղեկատու բյուրոներ:

Ի տարբերություն տեղեկատու աշխատանքների ընդհանուր սխտեմի, շրջանային կուլտուրայի տնե-

րում, գյուղական և կոլխոզային ակումբներում կազմակերպվող տեղեկատու բյուրոների աշխատանքները պետք է կրեն քաղաքացիական բնույթ: Նրանց կողմից սրվող յուրաքանչյուր հարցի պատասխանը պետք է հապեցված լինի քաղաքական բովանդակությամբ: Նա ամբողջովին պետք է արտահայտի կուսակցության քաղաքականության և սոցիալիստական շինարարության խնդիրները: Տեղեկատու բյուրոներին խնդիրները կայանում են նրանում, վորպեսզի նրանք ցույց տան կոլխոզիկների անձնական շահերի ու կոլխոզի ընդհանուր շահերի կապը և բանվորների ու գյուղացիների կապը սոցիալիստական պետության ընդհանուր շահերի հետ:

Տեղեկատու աշխատանքների խոշոր նշանակությունը և չափազանց անհրաժեշտությունը նշել է գեուկուսակցության 13-րդ համագումարը, այն համարելով «ամենից կարևոր աշխատանքը խրճիթ-ընթերցարանում»: Կուսակցության 13-րդ համագումարի ժամանակաշրջանից արմատապես փոխվեց ղրությունը գյուղում:

Այդ շրջանում տիրապետող տեսությունը հանդիսանում էր մասն անհատական գյուղացիական տնտեսությունը: Այժմ գյուղատնտեսության տիրապետող ձևերը հանդիսանում են կոլխոզներն ու խորհրտեսությունները, վորոնք հիմնված են մեքենայական բարձր տեխնիկայի վրա: 1938 թ. սկզբներին կոլխոզները կազմում էին ամբողջ գյուղատնտեսության 93,5% -ը: Միանգամայն փոխվել է հենց ինքը՝ գյուղացիությունը՝ նա դարձել է կոլխոզիկ գյուղացի, ազատվելով

կալվածատերերի, կուլակի և սպեկուլյանտի ամեն մի տեսակի շահագործումից:

Գյուղում այլևս չկան և չեն լինելու աղքատներ, բատրակներ և չքավորներ: Կուլակությունը ջախջախված է և լիկվիդացիայի յենթարկված վորպես դասակարգ: Մեր կոլխոզային գյուղացիությունը քաղաքականապես ավելի զարգացել է ավելի կուլտուրական և դարձել:

Աշխարհի ամենադեմոկրատական Ստալինյան Սահմանադրության հիման վրա կոլխոզային մասսան լենինյան-ստալինյան կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարությունը, սոցիալիզմի յերկրում կառուցում է իր կուլտուրական և բերկրալից կյանքը:

Մեր յերկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների արմատական փոփոխման հետ միասին գյուղում փոխվել են նաև մի շարք հարցեր, վորոնք ներկայումս հետաքրքրում են կոլխոզիկ գյուղացիությունը:

Առաջ է յեկել հարցերի մի մեծ խումբ, վորոնք կազմում են տեղեկատու աշխատանքների հիմնական բովանդակությունը: Կոլխոզիկների հետաքրքրությունը դեպի քաղաքական հարցերը զգալիորեն աճել է: Կոլխոզային գյուղը ներկայումս լիաբար և ապրում է քաղաքական կյանքով: Կոլխոզիկներն ուշի-ուշով հետաքրքրվում են ԽՍՀՄ-ի ներսում և արտաքին յերկրներում տեղի ունեցող քաղաքական բոլոր տեսակի անց ու դարձերով: Դա հատկապես փայլուն կերպով յերևան յեկավ ԽՍՀՄ-ի միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների

ընտրութիւնները ու Պասան լճի շրջանում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդները ընտրութիւնների ժամանակ անճանաչելի կերպով աճեց աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվութիւնը, բարձրացավ նրանց հետաքրքրութիւնը դեպի քաղաքական գիտութիւնները՝ հատկապես մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու գործում:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի խմբագրութեամբ և ընկեր Ստալինի անձնական մասնակցութեամբ լույս ընծայված կուսակցութեան պատմութեան համառոտ դասընթացը, այդ ստալինյան հրաշալի փաստաթուղթն ավելի ու ավելի ուժեղացրեց աշխատավոր մասսաների ներգրավումը բոլշեվիզմին տիրապետելու գործում:

Ակումբների դերը բոլշեվիզմի պրոպագանդայի խնդրում այժմ բավականին մեծ է:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը՝ կուսակցական պրոպագանդայի զրկածքի մասին, կապված կուսպատմութեան համառոտ դասընթացի լույս ընծայման հետ, պետք է լինի ակումբների և կուլտուրայի տների քաղ-դաստիարակչական աշխատանքների ծրագիր:

Ակումբների վարչութիւնները, տեղեկատու բյուրոների անդամները և ակումբի ամբողջ ակտիվը պարտավոր են ուսումնասիրել այդ հրաշալի փաստաթուղթը և իրենց աշխատանքների համար անեն գործնական հետեւութիւններ ու կազմակերպեն գործնական ոգնութիւն կոլլեկտիւն հսկայական մասսային, նոր կոլլեկտիւն կազմերին և գյուղական ինտելիգեն-

ցիային, նրանց ձգտումը—ստանալ քաղաքական կոմիւնիստութիւն և տիրապետել բոլշեվիզմին— իրագործելու համար, վորովհետև Մարքս-լենինյան թեորիան զինում է և տալիս է հասարակական կյանքի զարգացման որենքները, տալիս է վստահութիւն, ույժ, կողմնորոշում, ոգնում է հասկանալու շրջապատի դեպքերի ներքին կապերը և բարձրացնում է մեր կադրերի քաղաքական զգոնութիւնը: Ուստի ակումբների և նրանց տեղեկատու բյուրոների աշխատողներն իրենց աշխատանքներում կարևորագույն տեղ պետք է հատկացնեն կուսպատմութեան պրոպագանդային:

Կուսակցութիւնը լայն կերպով ծավալել է քաղ-դաստիարակչական և ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները, նրանցում ընդգրկելով քաղաքային և գյուղական ազգաբնակչութեան բոլոր խավերին:

Հարյուր-հազարավոր ագիտատորներ և պրոպագանդիստներ ներկայումս անց են կացնում լրագրային ընթերցանութիւններ, ղեկուցումներ, դասախոսութիւններ, զրույցներ, խմբակային պարապմունքներ, տարածում են քաղաքական գրականութիւն և այլն:

Ակումբների և կուլտուրայի տների տեղեկատու աշխատանքը հանդիսանում է այդ չափազանց կարևոր՝ ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքների մի մասը: ԽՍՀՄ-ի, միութենական և անտոնոմ հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդների ընտրութիւնների ժամանակ ակումբների և կուլտուրայի տների մեծ մասում կազմակերպվել էյին հատուկ տեղեկատու սեղաններ, վորոնք ոգտագործվում էյին մեծ

հաճույքով: Կոլխոզնիկները դիմում ելին այնտեղ պարզաբանելու իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ կապված Ստալինյան Սահմանադրութան և Գերագույն Խորհրդի ընտրությունների որենքի հետ: Խորհրդային իշխանության որենքների, կուսակցության և կառավարության կարևորագույն վորոշումների և առաջին հերթին Ստալինյան Սահմանադրության հետ կապված բոլոր հարցերի պարզաբանումը յեղել և մնում է տեղեկատու աշխատանքների գլխավոր բովանդակությունը:

Տեղեկատու բյուրոյի աշխատողները պետք է ուշադրություն հետևեն կուսակցության ու կառավարության վորոշումների ու որենքների հրապարակմանը, ձեռք բերելով այդպիսիք, պետք է անմիջապես լայն կերպով ծանոթացնեն ազգաբնակչությանը: Քաղաքական բնույթ կրող հարցերի պատասխանները և ներքին ու արտաքին կարևոր գեպքերի մասին ինֆորմացիաների հաղորդումը կազմում է տեղեկատու աշխատանքների հիմնական մասը:

Համ Կ(բ)Կ 18-րդ համագումարի՝ այդ հաղթանակած սոցիալիզմի և սոցիալիզմից դեպի կոմունիզմը շրջադարձ կատարող պատմական համագումարի խնդիրների ու վորոշումների մանրակրկիտ պարզաբանումն ու մասսայականացումը պետք է դառնա ակումբների և տեղեկատու բյուրոների ամենօրյա աշխատանքը:

Տեղեկատու աշխատանքներում միշտ մեծ տեղ են զբաղում գյուղատնտեսության հետ կապված հարցերը: Առաջներում, նախ քան կոլեկտիվացումը, յերբ գյուղատնտեսությունը գտնվում էր ցածր մակարդակի

վրա, յերբ հարկ էր լինում ագիտացիա տանել ագրոմիլնիմումի և արտրից գութանին անցնելու մասին, գյուղատնտեսություն հարցերի հետ կապված բոլոր տեղեկանքները հաճախ տալիս էր հենց ինքը՝ խրճիթվարը:

Այդ դրությունն արմատապես փոխվել է: Կոլխոզնիկներն այժմ վարում են բարդ, խոշոր կոլեկտիվ տնտեսություն, գործադրում են կատարելագործված մեքենաներ և բարձր ագրոտեխնիկա, ոգավում են ագրոնոմիական գիտությունն ուր նվաճումներից:

Գյուղում աճել է վորակյալ աշխատողների խոշորագույն բանակ—տրակտորիստներ, կոմբայնավարներ, մեխանիկներ և այլն: Ընդարձակվում է ստախանովյան շարժումը գյուղատնտեսության մեջ:

Սոցիալիստական անսանապահության հետագա զարգացման և բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ են գիտելիքներ:

Կոլխոզնիկները ձգտում են դեպի այդ գիտելիքների տիրապետումը: Նրանց պահանջները բարձրացել և աճել են:

Կուլտուրայի տների դիրեկտորները և ակումբների վարիչները միշտ չեն կարող պարզ ու սպառիչ պատասխան տալ այս կամ այն հարցին: Իրա համար կուլտուրայի տները և ակումբներն այդ աշխատանքներում պետք է ներգրավեն գյուղատնտեսության մասնագետ-վորակյալ ուժերի—ագրոնոմներ, զոտտեխնիկներ, մեխանիկներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ, կազմակերպել ստախանովյան աշխատանքների փորձի տեղափոխումն ուրիշ կոլխոզներ:

Շատ ակումբները և կուլտուրայի տները փորձը ցույց ե տալիս, վոր ստախանովականներն իրենց ցանկությամբ լծվում են այդ աշխատանքներին:

Նրանք տալիս են մանրամասն և հասկանալի պատասխաններ կոլխոզնիկների հարցերին՝ իրենց աշխատանքի մեթոդների և արտադրության նվաճումների մասին:

Տեղեկատու աշխատանքներում մեծ տեղ են զբաղում կոլտնտեսային գյուղի կուլտուր-կենցաղային հարցերը:

Կոլխոզային կարգերը ստեղծել են ունևոր և բարեկեցիկ կյանքի պայմաններ, վորի հետևանքով ներկայումս կոլխոզնիկներն աշխուժորեն հետաքրքրվում են արվեստով, գրականությամբ, գյուղատնտեսական գիտություններով, մեր բազմերանգ կյանքի հերոսական առերյայտով, բեռոի և ստրատոսֆերի նվաճումներով, մեր խիզախ պապանինականների, ողաշունների և հերոս սահմանապահների հայրենասիրությամբ և այլն: Նրանք ուզում են և հնարավորություն ունեն կուլտուրայես կառուցելու իրենց բնակարանները, մաքուր պահել նրանք, մնվել համեղ կերակուրներով, հագնվել գեղեցիկ, մտածում են իրենց կոլխոզի և գյուղի բարեկարգման մասին և այլն և այլն: Մի խոսքով «...Չկա համարյա այնպիսի բնագավառ, կուլտուրայի, եկոնոմիկայի և քաղաքականության ասպարեզում, վորը չհետաքրքրի կոլխոզնիկներին և կոլխոզունիներին» (Պրավդա): Ծագում են բազմաթիվ հարցեր, վորոնց պարզաբանման համար կոլխոզնիկները դիմում են ակումբներին: Յերիտասարդությունը ձգտում ե դեպի ուսումը, նա ուզում ե իմանալ, թե ինչպես

ընդունվել այս կամ այն ուսումնական հիմնարկը, ինչպես պարապել ինքնակրթությամբ: Ռազմական գիտելիքները, յերկրի պաշտպանության գործի կազմակերպումը, Պաշտպալիաքիմի աշխատանքները գյուղում, Ֆիզիկուլտուրան, սպորտային մրցումները, շախմատային տուրնիրները—այս բոլորը հետաքրքրում են վոչ միայն կոլխոզային յերիտասարդությանը, այլև մեծահասակներին:

Ակումբների և կուլտուրայի տների աշխատողները կարող են և պարտավոր են բավարարել կոլխոզնիկների մեծ հետաքրքրությանը և պահանջներին, կապված քաղաքական անց ու դարձերի, յերկրի պաշտպանության և կուլտուր-կենցաղային հարցերի հետ: Այսպիսով յերկրի պաշտպանության և կուլտուր-կենցաղային հարցերը պետք ե գրավեն խոշորագույն տեղ ակումբների և կուլտուրայի տների տեղեկատու աշխատանքների բովանդակության մեջ:

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Տեղեկատու բյուրոյի աշխատանքների հաջողությունը պայմանավորված ե կազմակերպչական հարցերի ճիշտ լուծումով:

Վորոնք են այդ հարցերը և ինչպես պետք ե կազմակերպել դրանք: Ամենից առաջ անհրաժեշտ ե, վոր տեղեկատու աշխատանքներում սահմանվի խիստ կարգապահություն: Այսինքն տեղեկատու բյուրոյում նշանակված հերթապահները սահմանված ժամկետին չինեն իրենց տեղերում և ճիշտ ու ժամանակին պա-

տասխանեն այն բոլոր հարցերին, վորոնք առաջադրու-  
վում են աշխատավորների կողմից:

Յեթե աշխատավորներն իրենց հետաքրքրող հար-  
ցերի պատասխանները ժամանակին չստանան և որերով  
փնտռեն տեղեկատու բյուրոյի հերթապահին, այդ ժա-  
մանակ տեղեկատու բյուրոն իր աշխատանքներում  
վոչ մի հաջողութուն չի ունենա և չի կարող վայելել  
անհրաժեշտ վստահութուն աշխատավորների կող-  
մից:

Տեղեկատու աշխատանքների հաջողութունն ա-  
պահովելու գործում մեծ նշանակութուն ունի նաև  
տեղեկատու բյուրոյի համար հատկացված անկյան  
գեղարվեստական ձևավորումը: Տեղեկատու բյուրոյի  
անկյանը պետք է տալ այնպիսի գեղարվեստական  
ձևավորում, վոր նա ակումբ հաճախող յուրաքանչյուր  
աշխատավորի ուշադրութունը գրավի իր վրա:

**ԻՆՁ ԻՆՎԵՆՏԱՐ Ե ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՈՒ  
ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՁԵՎԱ-  
ՎՈՐԵԼ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱՆԿՅՈՒՆԸ:**

Ինչպես վերեվում նշեցինք, վոր տեղեկատու  
բյուրոյի աշխատանքների հաջողութունը պայմանա-  
վորված ենք անուով, թե նա ինչքանով ճիշտ և ժամանա-  
կին կպատասխանի աշխատավորների կողմից առա-  
ջադրված հարցերին: Այս հնարավոր կլինի այն ժամա-  
նակ, յերբ տեղեկատու բյուրոն ձեռք կբերի տեղեկա-  
տու աշխատանքների համար անհրաժեշտ քանակու-  
թյամբ գրականութուն: Նա պետք է անպայման  
ունենա՝ ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի Սահմանադրու-  
թյունները, գյուղատնտեսական արտելի որինակելի

վանոնադրութունը, Համ Կ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի  
ժողկոմխորհի վորոշումները, ԽՍՀՄ-ի և Հայկական  
ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդների գերեկտիվներն ու  
հրամանագրերը, քաղբյուրոյի անդամների ղեկուցում-  
ներն ու յեղութները, տեղական կուսակցական և կա-  
ռավարական որգանների վորոշումները, կարմիր բանա-  
կայինների և նրանց ընտանիքների անդամների իրա-  
վունքների և արտոնությունների մասին յեղած վորո-  
շումները, որինքների ժողովածուների տեղեկագիր, գա-  
նազան հիմնարկությունների հասցեներ, բառարաններ  
(քաղաքական, տեխնիկական, ինչպես նաև միջազգա-  
յին բառերի), յերկաթուղային տարիֆներ, դնացքների  
չվացուցակ, կոլտոգնիկներ և խորհրդային գյուղի  
նյութական-կուլտուրական, աճը ցույց տվող դիագրամ-  
ներ, դիմումներ գրելու նմուշների ալբոմ, լրագրային  
կտրվածքներից կազմված վորոշումների կոմպլեկտ և  
այլն:

Յերբ այս գրականությունն ու վորոշումները  
սիստեմի վերածված կլինեն, այսինքն յերբ նրանք  
բաժանված կլինեն առաձին թեմաների,—գյուղատնտե-  
սական, արտադրական, հարկային և տուրքային, քա-  
ղաքական, իրավաբանական և այլն, —դա հնարավո-  
րութուն կտա արագ կերպով գտնել ցանկացած հարցի  
պատասխանը և բավարարել հարցատուների պահանջ-  
ները:

**ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍԻՍՏԵՄԻ ՅԵՆԹԱՐԿԵԼ ՆՅՈՒԹԵՐԸ**

Կան իհարկե բազմաթիվ ձևվեր, բայց մենք կթը-  
վենք միայն յերկուսը, վորոնցով պետք է ղեկավար-  
վեն ակումբվարները և կուլտուրայի տների դիրեկ-  
տորները:

Առաջինն այն է, վոր տեղեկատու բյուրոն կենտրոնական և տեղական լրագրերից ու ամսագրերից խնամքով կտրատում է այն բոլոր պաշտոնական վորոշումներն ու հրամանագրերը, վորոնք վերաբերում են գյուղին, կոլխոզին, կոլխոզի անդամներին, կարմիր բանակայինների ընտանիքների անդամներին, ծերերի ապահովությանը, բազմանդամ ընտանիքներին, տուրքերին ու հարկերին և այլն: Բյուրոն սրանց բաժանում է առանձին թեմաների և ամեն մի թեմայի համար հատկացնում է մի տետր, ավելի լավ է մի ալբոմ: Ալբոմի յերեսի վրա գրվում է թեմայի անունը, որինակ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑ: Այս հարցին վերաբերող բոլոր վորոշումները նրանց լույս տեսած ժամանակի հերթականությամբ խնամքով դասավորում է ալբոմում: Ալբոմի կազմի ներսի կողմին փակցվում է ՑԱՆԿ, վորտեղ գրվում է վորոշումների վերնագիրը և ալբոմի այն յերեսը, վորտեղ տեղավորված է այդ նյութը:

Մյուսը՝ դա սիստեմատիկ կատալոգային սիստեմն է:

Նյութերն այս ձևով սիստեմի վերածելու համար անհրաժեշտ է վերցնել 60 սմ. յերկարություն և 25 սմ. լայնություն ունեցող մի ստվարաթուղթ. այդ ստվարաթղթի վրա պետք է ամրացնել 4-5 գրպանիկներ: Ստվարաթղթի վերևի մասում պետք է գրել տեղեկատու նյութի ընդհանուր թեմատիկ անունը, ապա գրպանիկները վերևում յեղած տողերի համաձայն պետք է դասավորել նյութերը: Նյութերի դասավորումը գրպանիկների մեջ պետք է կատարել այբուբենական կարգով: Գրպանիկներում տեղավորվելիք նյութերը պետք է գրված

լինեն ստանդարտ չափի (10-16 սմ.) քարտերի վրա: Բացի վերևում ցույց տրված նյութերի ձեռք բերումից, անհրաժեշտ է, վոր բյուրոն մշտական կապ հաստատի այն բոլոր հիմնարկությունների հետ, վորոնցից նա կարող է ոգնություն ստանալ կոլխոզիկներին կողմից առաջադրված հարցերին ճիշտ պատասխանելու համար: Կոլխոզիկներին կողմից առաջադրված յուրաքանչյուր հարցի պատասխանը, լինի դա քաղաքական, վիճակագրական, իրավաբանական, բիբլիոգրաֆիական, բժշկական, հակակրոնական և այլն, անպայման պետք է լինի ճիշտ, կոնկրետ, սպառիչ, հասկանալի, քաղաքականապես և իդեոլոգիապես կայուն: Այս հնարավոր կլինի այն դեպքում, յերբ տեղեկատու բյուրոյի աշխատանքներին կմասնակցեն դասատուները, բժիշկները, գյուղխորհուրդի և կոլխոզի վարչության ներկայացուցիչները, ազրոնոմները և քաղաքականապես պատրաստված ու կայուն ընկերները, յերբ նրանք, համաձայն որացուցային պլանի, վորոշ որեր և ժամեր հերթապահություն կանեն:

Այն հարցերին, վորոնց պատասխանները տեղեկատու բյուրոն անմիջականորեն ինքն ի վիճակի չէ տալու, այդ դեպքում բյուրոն հարցերը դրավոր ուղարկում է համապատասխան հիմնարկություններ՝ գյուղխորհուրդ, կոլխոզի վարչություն, դատական որդաններ և այլն, վերջիններից ստացված գրավոր պատասխանները հաղորդում է հարցատուներին, այնպես, վոր վոչ մի հարց առանց պատասխանի չմնա:

Տեղեկատու բյուրոյին հատկացված անկյան կահավորման և զեղարվեստական ձևավորման համար, բացի սեղան-նստարանից նաև անհրաժեշտ է մեկ

պլակատ՝ «Այստեղ և գտնվում տեղեկատու բյուրոն» մակագրութեամբ, վորը փակցվում և տեղեկատու սեղանի հետևի պատի վերևի մասում. նրանից քիչ ներքև, պլակատի վրա, պետք է գրված լինի բյուրոյի աշխատանքի ժամերի հայտարարութունը, սրա կողքին պետք է կախված լինի բյուրոյի անդամների հերթապահութեան ցուցակը, այս միևնույն անկյունում պետք է գրվի մեկ պահարան կամ դարակներ՝ տեղեկատու գրականութունը դասավորելու համար:

Տեղեկատու բյուրոյի անկյունում պետք է գրվի նաև մեկ արկղ հարցերի համար, վորի կողքին պետք է կախված լինի հավասար չափի կտրված գրելու թուղթ, ապա քիչ այն կողմը մեկ տախտակ հարցեր և պատասխաններ գրելու համար: Անհրաժեշտ է նաև անկյան համապատասխան տեղում փակցնել՝ «Ինչպես բաշխել յեկամուտը կոլխոզում», «Ինչպես կատարել աշխատանքի հաշվառումը և աշխորերի գրանցումը» և այլն ցուցմունք-պլակատներ:

Ինչպես լողունները, այնպես ել պլակատները պետք է գրված լինեն գեղեցիկ և պարզ—ընթեռներ և տառերով:

Տեղեկատու բյուրոն պետք է ձեռք բերի նաև ժամացույց, բարոմետր և աշխարհագրական քարտեզներ: Նոր կազմակերպվող տեղեկատու բյուրոն գյուղի զանազան մասերում հայտարարութուն է փակցնում հետևյալ բովանդակութեամբ՝ «Ակումբին կից կազմակերպված է տեղեկատու բյուրո: Բյուրոն պատասխանում է աշխատավորներին հետաքրքրող բոլոր տեսակի հարցերին: Հարցերն ընդունվում և պատասխանվում են գրավոր և բանավոր: Այս մասին

պետք է հայտարարել նաև ողակներում, բրիգադներում և կոլխոզի ընդհանուր ժողովներում:

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Տեղեկատու աշխատանքների կազմակերպման համար կա հիմնականում յերկու ձև՝ անհատական և մասնախումբային (կոլեկտիվ):

Անհատական են համարվում տեղեկատու աշխատանքի հետևյալ ձևերը՝

- ա) հարցերի և պատասխանների տեսք:
- բ) գրավոր տեղեկանք, վորը տրվում է քարտերի միջոցով.
- գ) բանավոր տեղեկանք.
- դ) դիմումների և դանդառների կազմելը:

Մասնախումբային են համարվում տեղեկատու աշխատանքի հետևյալ ձևերը՝

- ա) տեղեկատու բնույթ կրող յեղույթներ ժողովներում.
- բ) պլակատային տեղեկանք.
- գ) լուսային-մոզական լսարանների միջոցով տրվող տեղեկանքներ.
- դ) հարց ու պատասխանի յերկուսեր.
- ե) ակումբի ակտիվի կցումն արտադրական տեղամասերին և բրիգադներին տեղեկանքներ տալու համար:

## ՀԱՐՑ ՈՒ ՊՍԱՍԻԱՆԻ ՏԵՏՐ

Հարց ու պատասխանի տեսքը տեղեկատու աշխատանքի ամենատարածված ձևն է: Վերցնում ենք սովորական ընդհանուր տեսք, վորի յեղույթի վրա գրում ենք՝

Ոգն. գյուղակումբներին—2

3005  
39



ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

..... Աղուսի  
 Սկսված է . . . . . » » —ի 193 . . թ.  
 վերջացված . . . . . » » —ի 193 . . թ.

Տետրի առաջին յերեսի վրա պետք է գրել ծանոթութուն տետրից ոգտվելու կարգի մասին, հետևյալ կերպ՝

«Այս տետրի մեջ կարելի չէ գրել ձեզ հետաքրքրող բոլոր հարցերի մասին: Հարցերը պետք է գրել տետրակի յերեսի վրա նշված «Հարց» վերնագրի տակ: Կարող ե պատահել, վոր ձեզ հետաքրքրող հարցի պատասխանն արդեն կա տետրում, ուստի նախքան հարցի գրելն անհրաժեշտ է աչքի անցկացնել տետրում յեղած հարցերը և յեթե տետրում ձեր հարցի նման հարց կա, այդ դեպքում հարցը չգրել և կարգալ նրա պատասխանը»: Հարցի տակ հարցատուների ստորագրութունը պարտադիր չէ, կարող ե լինել և կանոն չլինել:

Հարց ու պատասխանի տետրակի թերթերի յերեսների վրա պետք է գրել հետևյալ կերպ:

№ №	ՀԱՐՑ	յերես գրված հարցը	№ №	ՊԱՏԱՍԽԱՆ	յերես պատասխանված

Հարցերը, անկախ նրանց բովանդակութունից, գրվում են հերթականությամբ՝ 1, 2, 3, 4, 5 և այլն: Պատասխանների հերթականութունը պետք է զուգահեռի հարցերի հերթականությանը: Յեթե հարցերից մեկի պատասխանը չկա, այդ ժամանակ պատասխանի սյունյակում պետք է մեկ համար բաց թողնել, վորպեսզի հարցերի և պատասխանների համարները զուգահեռի պահպան իրար: Հարց ու պատասխանի տետրակը լցվելուց հետո տրված տեղեկանքներն ըստ իրենց բովանդակության պետք է սխտեմի վերածել, որինակ—կոլխոզի յեկամտի բաշխման մասին, տուրքերի և հարկերի մասին և այլն:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՔԱՐՏԱՅԻՆ ՍԻՍՏԵՄՈՎ  
 ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ

Տեղեկատու աշխատանքի քարտային սխտեմը, հարց ու պատասխանի տետրի հետ համեմատած, ավելի հարմար ձև է, թե նրանց սխտեմի վերածելու և թե հաշվառման հերթականության տեսակետից:

Տեղեկատու քարտերը պատրաստվում են սովորաթղթից կամ սովորական հաստ թղթից:

Տեղեկատու քարտը պետք է լինի 8-10 սմ-ի մեծությամբ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՔԱՐՏԻ ՆՄՈՒՇԸ

Խնդրում եմ պատասխանել իմ հետևյալ հարցին՝ . . .  
 . . . . .  
 . . . . .

Անուն և ազգանուն . . . . .  
 Վորտեղ և աշխատում . . . . .  
 Պաշտոնը . . . . .  
 Ամիս, թիվ . . . . .

Հարցերի համար քարտում թողնվում է 6—7 տող: Յեթե հարցն ավելի ընդարձակ է, այն ժամանակ պետք է լրացնել մյուս յերկժալ քարտը, վորը: յերկու յերեսի փոխարեն, ունի չորս յերես: Յերկժալ քարտերում հարցերը պետք է գրել առաջին և յերկրորդ յերեսների վրա: Հարցատույի անկետային տեղեկությունները (ազգանունը, պաշտոնը և այն) անպայման պետք է լրացնել հարցի վերջում, յերկրորդ յերեսի վրա: Յերկրորդ և չորրորդ յերեսների վրա գրվում է հարցի պատասխանը: Կարճ և ընդարձակ հարցերի քարտերը դասավորվում են տարբեր արկղներում և յուրաքանչյուր արկղում տեղավորված քարտերի համաձայն արկղների վրա գրվում է՝ «քարտեր—կարճ հարցերի համար», «քարտեր—ընդարձակ հարցերի համար»:

Հարցատուները, քարտերը լրացնելուց հետո, յեթե տեղեկատու բյուրոյի հերթապահն այնտեղ է, քարտերը հանձնում են հերթապահին, իսկ յեթե այնտեղ չէ, քարտերը գցում են № 1 հարցերի արկղի մեջ:

Արկղի մեջ գցված հարցերի պատասխանները պետք է տրվեն վոչ ուշ յերկու օրից, իսկ բյուրոյի հերթապահին հանձնված հարցաքարտերի պատասխանները պետք է տրվեն իսկույն և յեթ, կամ յեթե բյուրոյի հերթապահն է վիճակի չէ անմիջապես պատասխանելու, այն ժամանակ հատուկ օր է նշանակում

հարցին պատասխանելու համար, վորը յերկու օրից ուշ չպիտի լինի:

Ինչպես արդեն ասված է, պատասխանները գրվում են քարտերի հակառակ յերեսի վրա: Այս ձևով լրացրած քարտերը պետք է դասավորել № 2 պատասխան քարտերի արկղում, վորոշ ժամանակ անցնելուց հետո (յերկու շաբաթ կամ մեկ ամիս) լրացրած քարտերը պետք է հանել արկղից և, սխտեմի վերածելուց հետո դասավորել № 3 արկղում, ճիշտ այն ձևով, ինչ ձևով վոր դասավորում են գրադարանային սխտեմատիկ կատալոգները:

Տեղեկատու բյուրո հաճախող յուրաքանչյուր հարցատու, նախքան հարց տալը, պարտավոր է ստուգել № 3 արկղում դասավորված պատասխան-քարտերն այնպես, ինչպես այդ կատարվում է գրադարաններում, այս կամ այն գիրքը գտնելու համար:

Այս կարգի ստուգումը յերբեմն կարող է վերացնել հարց տալու անհրաժեշտությունը, քանի վոր հարցատուն կարող է իր հարցի պատասխանը գտնել այդ քարտերի մեջ:

Վորպեսզի տեղեկատու բյուրոն հաճախորդներին սովորեցնի № 3 սխտեմատիկ քարտերի արկղից օգտվելը, անհրաժեշտ է, վոր նա բյուրոյին հատկացված անկյան համապատասխան մասում փակցնի հետեյալ պլակատը՝ «նախքան քարտի լրացումը ուշադրությամբ ստուգեցեք № 3 արկղում յեղած քարտերը, այնտեղ կարող է լինել այնպիսի քարտ, վորի պատասխանը բավարարի ձեր հարցին»:

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՆԱՎՈՐ ԶԵՎԸ

Տեղեկատու աշխատանքների բանավոր ձևն ունի այն առավելութունները, վոր նրանից կարող են ոգտվել վոչ միայն գրագետները, այլև անգրագետներն ու կիսագրագետները: Բացի այդ, բանավոր տեղեկատու աշխատանքի պրոցեսում տեղեկատու բյուրոյի աշխատակիցն ավելի մոտ է լինում հարց տվողներին և նա կարող է ճշտութամբ պարզել նրանց կարիքը և ցույց տալ գործնական ոգնութունն վոչ միայն խորհուրդներով, այլև կոնկրետ գործով (դիմում կազմել, հիմնարկութուններն հասցեներ գրել, ցուցմունքներ տալ և այլն):

Տեղեկատու բյուրոյի աշխատակիցը պետք է ուշադրութամբ լսի ամեն մի հարց տվողին և, հարցը լրիվ պարզելուց հետո, տա նրան ձիշտ և սպառնիչ պատասխան:

Բանավոր տեղեկատու աշխատանքն ոգտավետ է դաե այն տեսակետից, վոր նա տալիս է անծանոթ բառերի բացատրութուն, նոր անունների և դարձվածքների պարզաբանում:

Այսպիսի դեպքում պատասխան տվողը չպետք է սահմանափակվի միմիայն առանձին բառերի բացատրութամբ, այլ նա պարտավոր է բացատրել և հասկացնել նախադասության ամբողջ միտքը:

Բանավոր տեղեկատու աշխատանքի մի առավելութունն էլ այն է, վոր պատասխանող ընկերը դործ է ունենում կենդանի մարդկանց հետ, վորոնց հետ գրուցելով նա պարզում է նրանց դարգացման մակարդակը և ըստ այնմ էլ տալիս է պատասխանը: Այս հանգա-

մանքը տեղեկատու բյուրոյի ամեն մի աշխատակից պետք է լավ հիշի:

Բանավոր տեղեկատու աշխատանքի թերութունը կայանում է նրանում, վոր տրված տեղեկանքները հաշվառման չեն յենթարկվում: Այս թերութունն էլ հեշտութամբ հնարավոր է վերացնել, յեթե տրված ամեն մի հարցի բանավոր պատասխանը լրացվի վերեվում նշված տեղեկատու քարտերի մեջ:

Տեղեկատու աշխատանքներն արտադրական տեղամասերին, բրիգադներին մոտեցնելու նպատակով բյուրոյի ակտիվ անդամներին պետք է ուղարկել դաշտում աշխատող կոլխոզնիկների մոտ՝ աշխատանքի ընդմիջումներին կոլխոզնիկներին հետաքրքրող հարցերին պատասխան տալու համար: Այստեղ պատասխանները պետք է տրվեն գլխավորապես բանավոր: Յեթե տեղում հնարավոր չէ անմիջապես պատասխանել, այդ դեպքում հարցը պետք է գրել տետրակի մեջ և համապատասխան մասնագետներից հարցի պատասխանը ստանալուց հետո, հաջորդ այցի ժամանակ, հայտնել հարցատույին:

Տեղեկատու աշխատանք պետք է ծավալել նաև ստախանովականների ընտանիքներում:

Ինչպես տեղեկատու բյուրոյի ակտիվն ուղարկվում է արտադրական տեղամասերը, այնպես էլ պետք է ուղարկել ստախանովականների տները, նրանց հետաքրքրող հարցերին պատասխանելու և անհրաժեշտ տեղեկանքներ տալու համար:

Այստեղ նույնպես, ստախանովականի տված հարցերին անմիջապես պատասխանել չկարողանալու դեպքում, նույն ձևով հարցի պատասխանը պատրաստվում է

և հաջորդ այցի ժամանակ հաղորդվում է հարցառու  
ստախանովականին կամ նրա ընտանիքի անդամին:

**ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ-  
ՆԵՐԸ ԺՈՂՈՎՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԶԱ-  
ՆԱԶԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Վորպեսզի կարելի լինի պատկերացնել տեղեկա-  
տու աշխատանքի այս ձևը, բերենք հետևյալ որինակը.  
Կոլխոզի վարչութիւնը հրավիրել է կոլխոզնիկների  
ընդհանուր ժողով, վորի մասին նախորոք պետք է  
խմանա տեղեկատու բյուրոն: Բյուրոն, նախքան ժողովի  
սկսվելը, ուղարկում է այնտեղ բյուրոյի ամենապատ-  
րաստված անդամներից մեկին, վորը ժողովի սկզբին  
հաղորդում է կարգում է միջազգային հարցերին և  
Պորհրդային միութեան ներսում կատարվող դեպքերին  
վերաբերվող տեղեկութիւններ:

Այսպիսի ինֆորմացիոն բնույթ կրող աշխա-  
տանքը կարելի յի տանել համերգների, ներկայացում-  
ների, դասախոսութիւնների և զանազան հավաքույթ-  
ների սկզբին. ինֆորմացիան պետք է տեղի վոչ ավե-  
լի, քան 10 րոպե. կարդացողը պետք է կարողանա  
կարդալ պարզ ու բարձր:

**ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՄՈԳԱԿԱՆ ԼԱՊՏԵՐԻ  
ՄԻՋՈՑՈՎ**

Այն ակումբներն ու կուլտուրայի տները, վորոնք  
ունեն մոզական լապտերներ, կարող են իրենց մոտ  
կազմակերպել տեղեկանքների լույսային ցուցադրում:  
Այս բանի համար, բացի լապտերից, անհրաժեշտ

է նաև ապակյա պլաստիկաներ՝ սովորական դիապոզի-  
տիվային չափով. կարելի յի ոգտագործել նաև մաք-  
րած հին նեգատիվները, վորոնց յեզրերին պետք է  
փակցնել ուղիղ և հավասար լայնութեամբ թուղթ, իսկ  
հետո սուշով գրել ցուցադրվելիք տեղեկանքները: Տե-  
ղեկանքները կարելի յի գրել զանազան գույնի սուշով՝  
կարմիր, կանաչ, կապույտ, սև և այլն: Տառերի չափը  
չպետք է անցնի 3—5 միլիմետրից:

Յեթե տրվելիք տեղեկանքը հնարավոր չէ մի  
պլաստիկայում տեղավորել, այդ դեպքում պետք է  
շարունակել մի ուրիշ պլաստիկայի վրա:

Պլաստիկաների վրա կարելի յի նաև տալ զա-  
նազան իլյուստրացիաներ, որինակ, դիագրամներ,  
նկարներն այն անձնավորութիւնների, վորոնց մասին  
ցուցադրվում է տեղեկանքը: Դիագրամները նախո-  
րոք պետք է նկարել թղթի վրա, ապա դնել ապակու-  
տակ և պատճենն արտագծել ապակու վրա: Թվերն ու  
մակագրութիւնները կարելի յի գրել ուղղակի պլաս-  
տիկաների վրա: Նկարների պատճենը հանելն ավելի  
հեշտ է. վերցնում ենք ապակին, դնում նկարի վրա և  
ինամքով ապակու վրա գծագրում ենք նկարի պատ-  
ճենը:

Պլաստիկաների մակագրութիւնները կատարելու  
ժամանակ, պլաստիկաների ամերից պետք է թողնել  
5 միլիմետրի չափ տարածութիւն, հակառակ դեպ-  
քում մակագրութիւններն եկրանի վրա ամբողջակա-  
նութեամբ արտաբերել հնարավոր չի լինի: Յուրաքան-  
չյուր պլաստիկայի վրա հնարավոր է տեղավորել 150—  
200 տառ, վորի համար գրվող տեղեկանքները պետք է  
կտրճ լինեն:

Տեքստի համառոտութիւնը գործին չի փնտրի, քանի վոր լույսային տեղեկանքը մասսայական տեղեկատու աշխատանքների ժամանակ ծառայում է իբրև ոժանդակ միջոց, վորով ծանոթացնում են դասախոսութեան, զեկուցման կամ ինֆորմացիոն լուրերի հիմնական դրվածքների հետ, իսկ մանրամասն բացատրութիւնները պետք է անել բանավոր: Լույսային տեղեկանքները ներկա յեղողների ուշադրութիւնը կենտրոնացնելով, նախապատրաստում է նրանց բանավոր բացատրութիւնները լավ պատկերացնելու և ըմբռնելու:

Որինակ, կոլլեոգնիկներն եկրանի վրա կարգում են՝ Ընկեր Ստալինն ասել է՝ «Սորհրդային գյուղացիութիւնը բոլորովին նոր գյուղացիութիւն է, վորի նմանը դեռ չի իմացել պատմութիւնը»:

Ինչո՞ւ խորհրդային գյուղացիութեանն ընկեր Ստալինն անվանել է «բոլորովին նոր գյուղացիութիւն»: Այս հարցը բնականաբար սրում է ներկա յեղողների ուշադրութիւնը և նրանց մեջ ցանկութիւն է առաջ բերում լսել այդ հարցի համապատասխան բացատրութիւնը:

### ՊԼԱԿԱՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պլակատային տեղեկանքները—այդ շատ թե քիչ ընդհանուր նշանակութիւն ունեցող տեղեկանքներն են: Ինչպէ՞ս պետք է լինեն այդ պլակատները: Ամենից առաջ պլակատը, ինչքան հնարավոր է, պետք է պատրաստել զեղարվեստորեն: Յերկրորդ՝ նկարազարդումը և գունավոր թղթերի կոմպոզիցյան ավելի չպետք է լինի պլակատի տեքստից:

Նկարազարդումը և մակագրութիւնը պետք է աշնպես պատրաստված լինի, վոր նա հեռվից ուշադրութիւն բեւեռի իր վրա:

Տեղեկատու պլակատն անպայման գրված պետք է լինի խոշոր և զեղեցիկ տառերով:

Պլակատը պետք է լինի հեշտ ընթեռնելի, չպետք է գրել աշնպիսի տառեր, վորոնք իրենց ծովում ձևերով շփոթ են առաջ բերում:

Պլակատային տեղեկանքների բովանդակութիւնը կարող է լինել՝ տեղական կոլխոզային հարցեր, աշխատանքի ստախանովյան ռեկորդներ, պայքար կոմունիստական կենցաղի համար, պայքար 7-8 միլիարդ փութ հացահատիկի համար և այլն:

Պլակատային տեղեկատուները միջոցով հնարավոր է նաև ցուցադրել զանազան դիագրամներ:

### ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՐՑ ՅԵՎ ՊԱՏԱՍԱՆԻ ՏԱԽՏԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Հարց ու պատասխանի տախտակը պետք է ունենա 40 սմ. լայնութեամբ և 60 սմ. յերկարութեամբ նորմալ մեծութիւն (տախտակը կարելի յի պատրաստել սովորաթղթից կամ ֆաներկայից):

Տախտակի լայնութեամբ, վերեվի մասում, պետք է գրել՝

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԽՏԱԿ,

վորից հետո ուղիղ և յերկար գծով վերնագիրը անջատել տախտակից, ապա տախտակը մեջտեղից վերեվից ներքեվ ուղիղ գծով կիսել յերկու մասի: Կի-

սելուց հետո տախտակի աջ կողմում գրել ՀԱՐՑ, իսկ ձախ կողմում՝ ՊԱՏԱՍԽԱՆ, վորոնք նույնպես գծով անջատվում են:

Տես հարց ու պատասխանի տախտակի ձևը.

40 սմ.

հարց ու պատասխանի տախտակ	
ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
70 սմ.	

Հարցատուները հարց ու պատասխանի տախտակի համար իրենց հարցերը կարող են գրել սովորական թղթի վրա: Գրելուց հետո հարցը գցում են տեղեկանքների տալու քարտային սխտեմի № 1-ին արկղը: Տեղեկատու բյուրոն հարցերն ամեն որ հավաքում է արկղից և, յեթե նրանք ունեն ընդհանուր նշանակություն ունեցող բովանդակություն, այդ դեպքում հարցը մաքուր և պարզ արտագրում է լավ թղթի վրա և գնդասեղով կամ կնոպկայով ամրացնում «հարց»-ի կողմում: Հարցի պատասխանը նույնպես պետք է գրել մաքուր ու պարզ և ամրացնել տախտակի «պատասխան»-ի կողմում:

Հարց ու պատասխանի տախտակի միջոցով աշխատավորներին հնարավոր է տեղյակ պահել այն բազմաթիվ հարցերին, վորոնք հաճախ տրվում են կոլխոզների կողմից:

Հարց ու պատասխանի տախտակը, իբրև ոժանդակ միջոց, պետք է ոգտագործել նաև լրագրերի և ամսագրերի ընթերցման ժամանակ:

Տախտակի վրա սովորաբար պետք է տեղավորել լրագրային այն նյութերում յեղած ոտարագրի բառերի բացատրությունները, վորոնք նախատեսնված են ընթերցանության համար: Բացի այս, տախտակի վրա հնարավոր է նաև տեղավորել այս կամ այն հողվածի և հեռագրի բովանդակություն հակիրճ պարզաբանումը:

Հարց ու պատասխանի տախտակի միջոցով հեղափոխական հանդեսների՝ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության, Մայիսի 1-ի, Փարիզյան կոմունայի, մարտի 8-ի և այլ տոնակատարությունների ժամանակ, մեկ շաբաթ առաջ պետք է հաղորդել տոնակատարություններին վերաբերող համապատասխան տեղեկություններ:

### ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԻ ՅԵՐԵԿՈՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Հարց ու պատասխանի յերեկոն մասսայական աշխատանքների լավագույն ձեվերից մեկն է: Հարց ու պատասխանի յերեկոյի բովանդակությունը, ինչպես այդ ցույց է տալիս նրա անունը, կազմում է ներկա յեղողների կողմից տրված հարցերն ու նրանց տրված պատասխանները:

Հարց ու պատասխանի յերեկոն կազմակերպելու համար գոյութիւն ունի յերկու ձև՝ ՈՒՆԻՎԷՐՍԱԼ յերեկո և ԹԵՄԱՏԻԿ յերեկո:

Ունիվերսալ յերեկոյի ժամանակ ներկա գտնվողները հարցեր են տալիս իրենց ցանկացած թեմայի շուրջը, իսկ թեմատիկ յերեկոյի ժամանակ հարցեր են տրվում նախորոք սահմանված թեմաների շուրջը:

Անկասկած ավելի նպատակահարմար ձև պետք է համարել թեմատիկ հարց ու պատասխանի յերեկոն, վորովհետև ունիվերսալ յերեկոն կարող է լինել չափազանց ընդարձակ ու անթեմատիկ:

Բացի դրանից, ունիվերսալ հարց ու պատասխանի յերեկոն բոլորովին զուրկ է վորոշ նպատակադրումից և անհնար է նախապատրաստվել նրա համար: Հարց ու պատասխանի յերեկոն ավելի բեղմնավոր դարձնելու համար մեծ նշանակութիւն ունի նախապատրաստական աշխատանքը:

Չնայած այս յերեկոնների կազմակերպման հիմնական ծանրութիւնն ընկնում է տեղեկատու բյուրոյի վրա, սակայն այդ բոլորովին չի նշանակում, վոր բյուրոն, առանց կողմնակի ոգնութեան, կարող է բոլոր խնդիրները լուծել: Հարց ու պատասխանի յերեկոյի կազմակերպման ժամանակ, բյուրոն այդ աշխատանքներին մասնակից է դարձնում ակումբին կից գոյութիւն ունեցող մնացած խմբակներին ևս, վորովհետև այդ խմբակներում միավորված են ակումբի ամենից ակտիվ անդամները և նրանց մասնակցութիւնն այս գործում ունի դրական մեծ նշանակութիւն:

Բացի այդ, յերբ հարց ու պատասխանի յերեկոյի կազմակերպման ժամանակ մենք մասնակից ենք դարձ-

նում մնացած խմբակները, դրանով տեղեկատու աշխատանքները կապում ենք մյուս խմբակային աշխատանքների հետ:

Յերեկոյի կազմակերպումը լավագույն կերպով նախապատրաստելու համար, պետք է նախորոք հանձնարարել հատուկ ընկերներին՝ բյուրոյի կազմից և մյուս խմբակների անդամներից: Նախապատրաստական աշխատանքը պետք է սկսել մեկ կամ յերկու շաբաթ առաջ: Առանձնացված ընկերներն ամենից առաջ պետք է հաշվառման յեթարկեն, թե տեղեկատու բյուրոն պատասխանողների ինչպիսի քանակ կարող է ունենալ այդ յերեկոյի ընթացքում: Այս պարզելուց հետո միայն սկսում են թեմայի ընտրութիւնը:

Սրա վրա պետք է ամենալուրջ ուշադրութիւն դարձնել, վորպեսզի ընտրվի այնպիսի թեմա, վորն իսկապես հետաքրքրում է տեղի ազգաբնակչութեանը: Ընտրված թեման պետք է լավ ստուգվի ակումբի ակտիվի և այն ընկերների կողմից, վորոնք առանձնացված են յերեկոյի ընթացքում հարցերին պատասխանելու համար:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԸՆՏՐԵԼ ԹԵՄԱՆ

Տեղեկատու բյուրոն նախորոք պարզում է, թե ավելի շրջանում վոր հարցն է ավելի շատ հետաքրքրում ազգաբնակչութեանը և ըստ այնմ ընտրում է թեման: Այս պարզելու համար, գյուղի այն վայրերում, ուր սովորաբար հավաքվում են կոլտոգնիկները (կոլխոզի գրասենյակ, ակումբ, կոոպերատիվ, գյուղխորհուրդ և այլն) պետք է կախել արկղ, վորի վրա փակցւնել հետևյալ հայտարարութիւնը՝

ՈՒՇԱՆԻՐՈՒԹՅՈՒՆ

Շուսով ..... ակումբը  
կամ կուլտուրայի տունը կազմակերպում և  
հարց ու պատասխանի յերեկո:

Գրեցե՛ք ձեզ հետաքրքրող բոլոր Տեսակի  
հարցերի մասին և գցե՛ք այս արկղի մեջ:  
Պատասխանը կստանա՛ք հարց ու պատասխանի  
յերեկոյին:

Հայտարարութիւնը պետք է գրված լինի պարզ  
և զեղեցիկ տառերով: Արկղի կողքից պետք է կախել  
կարտված թղթեր և մատիտ՝ գրելու համար:

Յերեկոյի հրավերումից մի քանի օր առաջ արկ-  
ղից պետք է հանել հարցերը և, ուշադրութեամբ կար-  
գալուց հետո, բաժանել ըստ առանձին թեմաների:  
Հարց ու պատասխանի յերեկոյի թեմայի համար  
պետք է ընտրել այնպիսի հարցեր, վորոնք ընդհա-  
նուր նշանակութիւն ունեն և տրված հարցերի մեջ  
հաճախ են կրկնվում:

Թեման ընտրելուց հետո անհրաժեշտ է կրկին  
անգամ ստուգել, թե վորքանով է այն հետաքրքիր  
կոլլեկտիվներին համար: Այդ պարզելու համար բյու-  
րոն հանձնարարում է մի քանի ընկերների, վոր  
ներանք ընտրված թեմայի շուրջը զրույց կազմակեր-  
պեն կոլլեկտիվներին հետ:

Այս բոլորն այնպես պետք է կատարվի, վոր  
ամեն մի կոլլեկտիվ իմանա առաջիկա հարց ու պա-

տասխանի յերեկոյում գրվելիք թեմայի մասին:

Յեթե պարզվեց, վոր ավյալ թեման կոլլեկտիվ-  
ների համար հետաքրքիր է, միայն այդ դեպքում  
պետք է ոգտվել նրանից:

Մեծ նշանակութիւն ունի թեմայի վերնագրումը.  
նա պետք է հասկանալի լինի ազգաբնակչութեան մե-  
ծամասնութեան համար:

Ինքնին հասկանալի չէ, վոր հարց ու պատաս-  
խանի յերեկոյի ընթացքում, իբրև պատասխանողներ  
պետք է ոգտագործել լավագույն պատրաստված ըն-  
կերներին:

ՀԱՐՑ ՈՒ ՊՍՏԱՍԽԱՆԻ ՅԵՐԵԿՈՅԻ ԸՆԹԱՅՔԸ

Հարց ու պատասխանի յերեկոն սկսելուց առաջ  
պետք է ընտրել յերեկոն դեկավարող և արձանագրու-  
թիւն կազմող յերկու քարտուղար:

Յերբ այս ընկերներն անցնում են իրենց պարտա-  
կանութիւններին, այդ ժամանակ յերեկոն անցկացնելու  
համար առանձնացված ընկերներից մեկը, գրված հար-  
ցերի նշանակութեան մասին 5—10 րոպեյի սահմաննե-  
րում պետք է ներածական խոսք ասի: Ապա ներկա  
յեղողները տալիս են լրացուցիչ հարցեր (բացառու-  
թեամբ այն հարցերի, վորոնք թեմայի ընտրութեան  
համար գցված են յեղել արկղի մեջ):

ՊՍՏԱՍԽԱՆ տալու համար հրավիրված ընկերնե-  
րի ներկայութիւնը պարտադիր է:

Յերեկոյի ընթացքում ներկա յեղողների մեջ ա-  
վելի մեծ աշխուժութիւն կառաջանա, յեթե պատաս-  
խանողները, վորոք քանակութեամբ հարցերի պատաս-  
խանելուց հետո, փոխարինվեն ուրիշ ընկերներով:

Կյուղատնտեսական բնույթ կրող հարցերը պետք է բաժանել խմբերի՝ ագրոնոմիական, գոտախնամիչական, մեքենագիտական և այլն, ու յուրաքանչյուր խումբ հարցին պետք է պատասխանի համապատասխան մասնագետը:

Պատասխանողներին հաճախակի փոփոխումն անկասկած կաշխուժացնի յերեկոն:

Մենք արդեն նշեցինք, վոր արձանագրություն կազմելու համար պետք է ընտրվեն յերկու քարտուղար: Տրված հարցերը և նրանց պատասխանները ճիշտ արձանագրելու և արձանագրությունների մեջ միասնականություն ստեղծելու համար, ընտրված քարտուղարները, արձանագրություն կազմելիս, պետք է ղեկավարվեն արձանագրություն կազմելու հետևյալ ձևով:

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

« . . . . . 193 թ. . . . . »

ակումբում կամ կուլտուրայի տնում կայացած հարց, ու պատասխանի յերեկոյի

Տրված . . . . . հարցերին պատասխանել են՝

. . . . .  
 . . . . . ընկերները:

Հարցեր			Պատասխաններ		
№ թ	Հարցի բովանդակութ.	Ո՞վ է հարց տվողը	№ թ	Պատասխանի բովանդակ.	Ո՞վ է պատասխանել

Հարց տվող ընկերների ազգանունների արձանագրումը ցանկալի չէ, բայց վոչ պարտադիր: Ներկայիցողներին անհրաժեշտ է բացատրել, վոր ցանկացողները տեղեկատու բյուրոյից կարող են ստանալ իրենց հետաքրքրող բոլոր տեսակի հարցերի պատասխանները:

Այն նյութերը, վորոնք ստացվում են այսպիսի հարց ու պատասխանի ժամանակ, մեծ նշանակություն ունեն, քանի վոր նրանք հնարավոր է ոգտագործել ինչպես տեղեկատու բյուրոյի կողմից տեղեկանքներ տալու ժամանակ, այնպես ել ակումբների ու կուլտուրայի տներին հետագա մասսայական կուլտուրայի զարգացման աշխատանքների ծավալման և սլանավորման համար: Վորովհետև նրանցում արտացոլում են այն հարցերը, վորոնցով հետաքրքրվում են աշխատավորները:

**ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

Տեղեկատու բյուրոն պետք է հատուկ որագիր պահի, թե նրա կողմից տրված յուրաքանչյուր տեղեկանքն ինչ հետևանք և ոգուտ է տվել հարց տվողին:

Ո՞ւր կողմից է տրված հարցը, անուն, անուն	Հարցի բովանդակություն	Յերբ է տրված հարցը (ամիս և օր)	Պատասխանի համար և ստանդարտի համար	Ո՞վ է տվել պատասխանը և անուն	Տրված տեղեկանքի հետևանքը

Վորոշ ժամանակ անցնելուց հետո, պետք է ստուգել, թե տեղեկատու բյուրոյի կողմից այս կամ այն ընկերոջ տրված տեղեկանքն ինչ հետևանք կամ ոգուտ է տվել հարց տվողին:

Յերբ տեղեկատու բյուրոյի կողմից ցույց տրված ոգնությունն անհրաժեշտ դրական հետևանքներ չի տալիս, այդ դեպքում պետք է պարզել դրա պատճառները և գործադրել բոլոր միջոցները, վորպեսզի լուծվի հարց տվողի որինական պահանջները:

Կասկածից վեր է, վոր այս տեղեկատու գրքույկում նշված ձևերի ու մեթոդների գործադրումը նպաստում է ահումբային մնացած մասսայական աշխատանքներին և բարձրացնում է նրանց մակարդակն ու վորակը:



<< Ազգային գրադարան



NL0223835

205

52.400